ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N** «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԾՁԲ-11/3-14-1»

Ք.Գյումրի

« » « » 2014 թ.

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն , ի դեմս Միջազգային գլխավոր տնօրենի տեղական տեղակալ՝ Վ.Մարտիրոսյանի , որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և « » ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սույն պայմանագրով սահմանված կարգով ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորություն (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջներին և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար:

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _______ (_____տառերով____________________________________________ ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել մինչև 20 տոկոս կանխավճար):

4.2 Պատվիրատուն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում սույն պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով Ծառայության կամ առանձին տեսակի ծառայությունների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար՝ կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով՝ տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

4.3 2014 թվականի դեկտեմբեր ամսին մատուցված ծառայության դիմաց դրամական միջոցների փոխանցումը կատարվում է միանվագ կարգով, որպես կանխավճար, մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը, որը մարվում է հանձնման–ընդունման արձանագրությամբ՝ մինչև 2015 թվականի հունվար ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2014թ.:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների

մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**8.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| Գ Ն Ո Ր Դ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | «                    » |
| Ք.Գյումրի Դուդկո 1 | ________________ |
| <<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ | ______________________ |
| Հ/Հ2380020526250100 | __________________ |
| ՀՎՀՀ 05531223 | Տնօրեն՝ |
| Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝ | (ստորագրություն) |
| __________________Վ.Մարտիրոսյան | Կ.Տ |
| ստորագրություն | |
| Կ.Տ | |

«ՀՀՏԿՆԶՏՊԿ-ՇԶ-ՇՀԾՁԲ-11/3-14-1» ծածկագրով
մրցույթի հանձնաժողովին

# Գ Ն Մ Ա Ն Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ե Լ ՈՒ

# Դ Ի Մ ՈՒ Մ

_________________________________-ն հայտնում է , որ ցանկություն ունի Ընթացակարգի մասնակցի
անվանումը/անունը/
մասնակցելու « Շիրակ-ջրմուղկոյուղի » ՓԲԸ-ի կողմից «ՀՀՏԿՆԶՏՊԿ-ՇԶ-ՇՀԾՁԲ-11/3-14-1» ծածկագրով հայտարարված ընթացակարգի գնի առաջարկի չափաբաժիններին և հայտի /ծանուցման/ պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

___________________________________ -ն հայտնում է և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը/

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է , բացառությամբ`

1. Պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների :
2. Համատեղ գործունեության կարգով /կոնսորցիումով/ մասնակցության

դեպքերի:

__________________________________ - և հայտնում և հավաստում է , որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը

գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

____________________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է-- - ----------------
Ընթացակարգի մասնակցի անվանումը

________________________________________________________ ________________
Մասնակցի անվանումը /անունը/ղեկավարի պաշտոնը,Անուն Ազգանուն/ /ստորագրություն/

«______»_______________2014թ
(ամսաթիվը, ամիսը)

«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԾՁԲ-11/3-14-1» ծածկագրով
մրցույթի հանձնաժողովին

# Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԾՁԲ-11/3-14-1» ծածկագրով պարբերական մրցույթի հրավերը ____________________________________________________________-ն
մրցույթի մասնակցի անվանումը(անունը)
առաջարկում է ____________________________չափաբաժին(ներ) կատարել հետեւյալ գներով.

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | | | | |
| 2 | | | | |
| 3 | | | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |
| 8 | | | | |
| 9 | | | | |

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:***
*****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

-----------------------------------------------------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը)

___________________
(ստորագրություն)

Կ.Տ.

«______»______________2014թ
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 1
«------» ----2014-թ. կնքված
N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԾՁԲ-11/3-14-1» պայմանագրի

**<<Շիրակ-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին 2014թ. անհրաժեշտ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների ցանկ**

## Տեխնիկական բնութագիր

| Չափ. | Ծառայության անվանումը | Չափի միավ. | Քանակ | Տեխ.բնութագիր |
|---|---|---|---|---|
| 1 | Առջևի ընթացքային մասի վերանորոգում | կոմպլ | 22 | Ղեկի շառավղյոների փոխարինում, գռանատների և օսերի փոխարինում, ռազվալի տուլկիներիփոխարինում, ցապֆաներ առանցքակալների փոխարինում |
| 2 | Ղեկավարման տուփի նորոգում | կոմպլ | 16 | ղեկավարման տուփի առանցքակալների, սեկտորների և չերվյակի փոխարինում |
| 3 | Կցորդման մեխանիզմի նորոգում | կոմպլ | 28 | երկաթյա և ֆերադո սկավառակների փոխարինում,վիժիմնոյ առանցքակալի փոխարինում |
| 4 | Մեկնարկիչի փոխարինում | հատ | 22 | մեկնարկչի հանում և տեղադրում |
| 5 | Հովացման համակարգի նորոգում | կոմպլ | 20 | ռադիատորների փոխարինում, պոմպի փոխարինում, ռետինե խողովակների փոխարինում |
| 6 | Ետևի ընթացքային մասերի նորոգում | կոմպլ | 22 | շտանգաների և տուլկիներիփոխարինում, զսպանակների և ռետինե պաղուշկաների փոխարինում, կիսասռնիների, առանցքակալների փոխարինում, ռեդուկտորի փոխարինում |
| 7 | Էլեկտրոհամակարգի նորոգում | կոմպլ | 35 | մեկնարկիչի, գեներատորների, կամուտատորի բաշխիչի փոխարինում և նորոգում, լուսավորության նորոգում |
| 8 | արգելակման համակարգի նորոգում | կոմպլ | 30 | արգելակման կոճերի, շլանգների, խողովակների փոխարինում, գլանների նորոգում և փոխարինում |
| 9 | Փոխանցման տուփի նորոգում | կոմպլ | 20 | փոխանցման տուփի ատամնանիվների, մուֆտերի, լիսեռների, առանցքակալների փոխարինում |
| 10 | Կամրջակի ռեդուկտորի նորոգում | կոմպլ | 12 | ռեդուկտորի, ատամնանիվների փոխարինում, առանցքակալների փոխարինում |
| 11 | Գազի բալոնների տեղադրում | հատ | 3 | բնական գազով աշխատող ավտոմեքենաներ գազի բալոնների տեղադրում |
| 12 | Գազի սարքավորումների նորոգում | կոմպլ | 15 | ռեդուկտորների նորոգում, փականների և խողովակների փոխարինում |
| 13 | Վակուումային համակարգի նորոգում | կոմպլ | 20 | Վակուումների մանժետների փոխարինում, ընթացքային խողովակների փոխարինում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Անվադողերի վուլկանիզացում | հատ | 300 | անվադողերի անցքերի նորոգում, հավասարակշռում, անվադողերի փոխարինում |
| 15 | Գազաբալոնների և գազի սարքերի լվացում | կոմպլ | 20 | Գազաբալոնների հանում, լվացում և տեղադրում, անսուրք մասերի փոխարինում |
| 16 | Բելառուսի վառել.բաշխիչ պոմպի ստուգում և նորոգում | կոմպլ | 6 | Կատարել բաշխիչ պոմպի հանում, ստուգման ապարատի տեղադրում, ճնշումների ստուգում անհրաժեշտության դեպքում, զույգերի և առանցքակալների փոխարինում |
| 17 | Շարժիչի ծնկաձև և բաշխիչ լիսեռների ուղղում, հավասարակշռում և հղկում | կոմպլ | 15 | Ծնկաձև լիսեռի և բաշխիչ լիսեռի վռանների փոխարինում , ուղղում, մաքրման և հղկման աշխատանքներ չափաբերումներով |
| 18 | Շարժիչի իրանի պարկուճների նորոգում | կոմպլ | 15 | Իրանի պարկուճների ներտաշման և հղկման, չափաբերման աշխատանքներ |
| 19 | Էքսկավատորի հիդրամխոցների նորոգման և ուղման աշխատանքներ | կոմպլ | 20 | Կատարել հիդրամխոցների ծռված մասերի ուղղում, ներքին մանժետների բնկինի հղկում, մանժետների փոխարինում |
| 20 | Կոտրված մեքենայի մասերի, թափքերի վերանորոգում | կոմպլ | 10 | Երկաթյա սկավառակների կոտրված մասերի վերանորոգում և ստուգում, կոտրված թափքերի մետաղյա մասերի փոխարինում, նորոգում |
| 21 | փոխանցման լիսեռի խաչուկի փոխարինում | հատ | 100 | Փոխանցման լիսեռի հանում, լիսեռից խաչուկի հեռացում,նոր խաչուկի տեղադրում տեղադրում և լիսեռի տեղադրում մեքենայի վրա |

**Գ Ն Ո Ր Դ**

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
Ք.Գյումրի Դուդկո 1
<<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ
Հ/Հ2380020526250100
ՀՎՀՀ 05531223
Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝
_________________Վ.Մարտիրոսյան
ստորագրություն
Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

« »
________________
______________________
__________________
Տնօրեն՝
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
«------» ----2014--թ. կնքված
N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԾՁԲ-11/3-14-1» պայմանագրի

**Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման**

## Գնման ժամանակացույց

| Հ/հ | Անվանում | Քանակ | Հ/մ | Գումար | I եռ-կ | II եռ-կ | III եռ-կ | IV եռ-կ | Ընդ-ը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Առջևի ընթացքային մասի վերանորոգում | 22 | կոմպլ | | 5 | 6 | 5 | 6 | 22 |
| 2 | Ղեկավարման տուփի նորոգում | 16 | կոմպլ | | 4 | 4 | 4 | 4 | 16 |
| 3 | Կցորդման մեխանիզմի նորոգում | 28 | կոմպլ | | 7 | 7 | 7 | 7 | 28 |
| 4 | Մեկնարկիչի փոխարինում | 22 | հատ | | 5 | 6 | 5 | 6 | 22 |
| 5 | Հովացման համակարգի նորոգում | 20 | կոմպլ | | 5 | 5 | 5 | 5 | 20 |
| 6 | Ետևի ընթացքային մասերի նորոգում | 22 | կոմպլ | | 5 | 6 | 5 | 6 | 22 |
| 7 | Էլեկտրոհամակարգի նորոգում | 35 | կոմպլ | | 8 | 9 | 9 | 9 | 35 |
| 8 | արգելակման համակարգի նորոգում | 30 | կոմպլ | | 7 | 8 | 7 | 8 | 30 |
| 9 | Փոխանցման տուփի նորոգում | 20 | կոմպլ | | 5 | 5 | 5 | 5 | 20 |
| 10 | Կամրջակի ռեդուկտորի նորոգում | 12 | կոմպլ | | 3 | 3 | 3 | 3 | 12 |
| 11 | Գազի բալոնների տեղադրում | 3 | հատ | | 1 | 1 | 1 | | 3 |
| 12 | Գազի սարքավորումների նորոգում | 15 | կոմպլ | | 3 | 4 | 4 | 4 | 15 |
| 13 | Վակուումային համակարգի նորոգում | 20 | կոմպլ | | 5 | 5 | 5 | 5 | 20 |
| 14 | Անվադողերի վուլկանիզացում | 300 | հատ | | 75 | 75 | 75 | 75 | 300 |
| 15 | Գազաբալոնների և գազի սարքերի լվացում | 20 | կոմպլ | | 5 | 5 | 5 | 5 | 20 |
| 16 | Բելառուսի վառել.բաշխիչ պոմպի | 6 | կոմպլ | | 1 | 2 | 1 | 2 | 6 |
| 17 | Շարժիչի ծնկաձև և բաշխիչ լիսեռների | 15 | կոմպլ | | 3 | 4 | 4 | 4 | 15 |
| 18 | Շարժիչի իրանի պարկուճների նորոգում | 15 | կոմպլ | | 3 | 4 | 4 | 4 | 15 |
| 19 | Էքսկավատորի հիդրամխոցների | 20 | կոմպլ | | 5 | 5 | 5 | 5 | 20 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | Կոտրված մեքենայի մասերի, թափքերի | 10 | կոմպլ | | 2 | 3 | 2 | 3 | 10 |
| 21 | փոխանցման լիսեռի խաչուկի փոխարինում | 100 | հատ | | 25 | 25 | 25 | 25 | 100 |

**ԳՆՈՐԴ**

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

Ք.Գյումրի Դուդկո 1

<<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ

Հ/Հ2380020526250100

ՀՎՀՀ 05531223

Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝

__________________Վ.Մարտիրոսյան

ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**

« »

________________

______________________

__________________

Տնօրեն՝

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 3
«------» ----2014--թ. կնքված
N **«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԾՁԲ-11/3-14-1»** պայմանագրի

## Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/մ | Անվանում | Քանակ | Գին | Գումար | I եռ-կ | II եռ-կ | III եռ-կ | IV եռ-կ | Ընդ-ը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ | | | | 25% | 50% | 75% | 100% | 100% |

**ԳՆՈՐԴ**
«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
Ք.Գյումրի Դուդկո 1
<<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ
Հ/Հ2380020526250100
ՀՎՀՀ 05531223
Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝
__________________Վ.Մարտիրոսյան
ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**
« »
________________
______________________
__________________
Տնօրեն՝
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
«------» ----2014 թ. կնքված
N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԾՁԲ-11/3-14-1» պայմանագրի

Կատարող

Գտնվելու վայր

հհ__

ՀՎՀՀ

Պատվիրատու

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
Ք.Գյումրի Դուդկո 1
<<Արէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ
Հ/Հ2380020526250100
ՀՎՀՀ 05531223

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«------» --------------------- 2------թ.

Պայմանագրի անվանումը՝ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերման:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «----» ---------------------- 2014 թ

Պայմանագրի համարը՝ **«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԾՁԲ-11/3-14-1»**

Պատվիրատուն, ի դեմս Միջազգային գլխավոր տնօրենի տեղական տեղակալ՝ Վ.Մարտիրոսյանի և Կատարողը՝ ի դեմս ----------------------------------------------------------, հիմք ընդունելով որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները, աշխատանքները եւ ծառայությունները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի) շրջանակներում Կատարողը «------» --------------------- 2------թ.-ից «------» --------------------- 2------թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքնե րի կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

**ԳՆՈՐԴ**

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
Ք.Գյումրի Դուդկո 1
<<Արէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ
Հ/Հ2380020526250100
ՀՎՀՀ 05531223
Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝
__________________Վ.Մարտիրոսյան
ստորագրություն

Աշխատանքը ընդունեց

**ՎԱՃԱՌՈՂ**

« »

________________

______________________

__________________

Տնօրեն՝
(ստորագրություն)
Կ.Տ

# ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈւԹՅՈւՆ N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԾՁԲ-11/3-14-1»

ք. Գյումրի << >> _____________ 20 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Շիրակ ջրմուղ կոյուղի >> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ << >> ձեռքբերման **«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԾՁԲ-11/3-14-1»** ծածկագրով շրջանակային ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված << >> ձեռքբերման N **«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԾՁԲ-11/3-14-1»** գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ --------------------թվերով------------------- (------------------------------տառերով----------------------------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>> -ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Շիրակ ջրմուղ-կոյուղի >> ՓԲԸ-ն առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ. -ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>
<<Մասնակցի հասցեն>>
<<Մասնակցի բանկի անվանումը>>
Հ/Հ
ՀՎՀՀ

տնօրեն` --------------------------------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ` -----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ